ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐ» ԹԵՐԹԸ (1843—1846 թթ.)

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Գրեթե հինգ տասնամյակ անցավ մինչև որ հայ պարբերական մամուլը գերազանցապես լրատու լինելուց դարձավ իրական կյանքն արտացոլող և այդ կյանքի վրա ներգործող միջոց։ Սեփական ինքնության հաստատման համար մեր պարբերական հրատարակությունների անցած ուղու վերջնագծում, 1843 թ. մայիսին, Զմյուռնիայում հանդես եկավ «Հայրենասեր» թերթը։

Արդեն 1840 թ. օգոստոսից Զմյուռնիան ուներ իր պարբերականը՝ «Արշալույս արարատյան», որ մեր առաջին ազգային ինքնուրույն թերթն էր։ Երկրորդ թերթի հրատարակությունը շուրջ 5000 հայերից բաղկացած նույն գաղթօջախում և գրեթե միանման ծրագրով հազիվ թե անհրաժեշտություն էր։ Սակայն խնդիրն էլ հենց այն էր, որ «Հայրենասերը» ասպարեզ էր եկել ինչ-որ չափով հակակշռելու «Արշալույս արարատյանին», որի արդեն հրատարակված 140 համարների բովանդակությունը հիմնականում զանազան լուրերն էին։ Նոր ստեղծվող պարբերականը չէր կարող բավարարվել սոսկ լուրերով։ Նա պետք է իր գոյությամբ նշանավորեր առաջընթաց այն քայլը, որ հասարակական անհրաժեշտություն էր՝ դառնար կյանքի, տեղի ունեցող իրադարձությունների վրա ներգործելու միջոց, մարմնավորեր մամուլի դերի նոր ըմբռնումը։ Ավելին. հենց սկզբից «Հայրենասերը» հակում ուներ դառնալու ոչ թե միայն գաղթօջախի, այլ նաև «քանի մը միլիոն հոգիե բաղկացած և երկրագունտին շատ տեղերը ցրված ժողովուրդի մը» թերթը։ Ուստի և, երկու թերթի գոյության իրավունքին անդրադառնալով, բացատրում է «Հայրենասերը». նրանք «բոլոր ազգինն են և անոր օգտին և համբավուն համար կտպվին»։ Նրանց նպատակն է իրար կապել գաղթօջախները և նպաստել վերացնելու ազգի «ամեն բանի, մանավանդ զարգացման մեջ, ետ» մնալը։ Այս իմաստով զմյուռնահայ երկու թերթերը, «հասարակության արձագանք ըլլալով», լծակիցներ էին, ինչպես հռչակել է «Հայրենասերն» իր ծրագրային հայտարարության մեջ։

Սակայն իրենց սկզբնավորումով և հիմնադրությամբ զմյուռնահայ երկու թերթերը բնավ միանման չէին և դա որոշիչ դեր խաղաց։ «Արշալույս արարատյանը» անհատական նախաձեռնության արդյունք էր և նրա լիիրավ տերը Ղ. Պալդազարյանն էր։ «Հայրենասերը» հիմնել էր նորաստեղծ Արագածունյաց ընկերությունը, որի նպատակն էր թերթի հետ միաժամանակ հրատարակել աղգօգուտ գրքեր։ Ընկերությունը թերթի խմբագրությունը հանձնարարել էր Ս. Մելիքսելիմյանցին՝ մի խումբ երիտասարդների գործակցությամբ։ Իսկ դա նշանակում էր, որ «Հայրենասերը» ոչ թե մի անհատի, այլ կոլեկտիվ ջանքերի արդյունք էր և արտահայտելու էր մի խումբ համախոհների կարծիքը։ Հենց այդ էլ պայմանավորում է այն ելակետային տարբերությունը, որ գոյություն ունի երկու թերթերի միջև։ Մասնավորապես հատկանշական է, որ «Հայրենասերի» դիրքորոշումը ի սկզբանե մայր Հայաստանն էր, որին նվիրված

նյութերին նա առանձին բաժին է հատկացրել հենց առաջին համարից։ Այդտեղ թերթը հաղորդում է, որ Արարատյան աշխարհը 1828-ից «խաղաղ վիճակի մը մեջ է», իսկ հայրենակիցները բարվոք կյանք են վարում։ Բազմաթիվ նյութերում թերթը շեշտել է ռուսական տիրապետության շնորհիվ հայության համար ստեղծված առավելությունները։ Պատկերացում է տվել ռուս հասարակության մասին, Մ. Թաղիադյանի գրառումների տպագրությամբ նկարագրել է զոհված ռուս զինվորների պատվին հուշարձան հիմնելու հանդիսավորությունը, պարբերաբար լուրեր է տպագրել Երևանից, Ալեքսանդրապոլից, Էրզրումից։ Առանձնապես ուշագրավ է Սևանա կղզու պատմությանը նվիրված ուսումնասիրությունը, որ տպագրվել է թերթի երեք համարներում[1]։ Այդպիսով «Հայրենասերը» իր ընթերցողներին ոչ միայն հաղորդակից էր դարձնում Հայաստանի կյանքին, այլև նրանց կողմնորոշում էր դեպի մայր հայրենիք, կոչ անում «Հայրենյաց կորուսյալ փառքը ուսման միջոցավը վերստին ձեռք բերել» (№ 105)։

1840-ական թթ. առաջին կեսին հրատարակված հայերեն սակավաթիվ (հաղիվ 5—6) պարբերականների շարքում «Հայրենասերը» հատուկ տեղ ունի նախ և առաջ իր բարձրացրած ու քննարկած հարցերով։ Դրանք ազգի ու գաղութահայության ընդհանրությանը վերաբերող հրատապ հարցեր էին, որոնց արծարծումը նպաստում էր ազգային զարթոնքին ու առաջադիմությանը, հասարակական մտքի կազմակերպմանն ու զարգացմանը։ Իր սուղ և կաշկանդված հնարավորություններն օգտագործելով՝ թերթը որոշակի նպաստ է բերել հայոց պատմությանն ու մշակույթին։

«Հայրենասերը» լույս էր ընծայվում ծրագրային մի որոշակի պայմանով. թերթը «զգույշ ըլլալու է տերությանց վերաբերյալ վեճերեն և հեռի պիտոր ըլլա հավատքի վրա առարկաներեն» (№ 1)։ Դա նրան հնարավորություն է տվել հայացքը բևեռել, այսպես ասած, ներազգային, աշխարհիկ խնդիրների վրա, որը և պայմանավորված էր Արաքածունյացի ընդհանուր նպատակով։ Նկնկլով իր ծրագրից, թերթը հենց անդրանիկ համարում առաջ է քաշում առևտրի և վաճառականության շահավետության հարցը, հորդորում առաջընթացի հասնել այդ ասպարեզում՝ ելակետ ունենալով հայրենասիրությունը։ Առևտրի հետ մեկտեղ, արդեն 3-րդ համարում, նա շեշտում է երկրագործության օգտակարությունը. երկրագործությունը բնության առատ պարգևն է, գրում է թերթը և ընդգծում՝ «Հիրավի շատ զարմանալու արժանի է այս բանիս վրա տակավին մեր անհոգությունը»։

Թերթի էջերում առանցքային հարցեր էր հարուցում հատկապես Խաչատուր Էքիզյանը, որին կարելի է դասել հայ առաջին ուշագրավ ժուռնալիստների շարքը։ «Հայրենասերի» 1843 թ. հուլիսի 16-ի համարում նա հանդես է եկել իր ժամանակի համար շատ արժեքավոր հոդվածով՝ «Հայոց լեզվին վրա»։ Արձագանքելով «Արշալույս արարատյանի» № 130 և № 131-ում նույն վերնագրով լույս տեսած արժեքավոր հոդվածի հեղինակ «Գ. Կ.»-ին[2], նա պաշտպա-

---

1 «Հայրենասեր», 1, 15 և 29 մարտի 1846, № 103—105 (այսուհետև կնշվեն միայն թերթի համարները՝ տեքստում, փակագծերի մեջ)։

2 Այս սկզբնատառերով հանդես էր գալիս լուսամիտ վաճառական, թարգմանիչ ու առաջադիմական գործիչ Գրիգոր Կոստանդյանը՝ բնագետ-փիլիսոփա Գալուստ Կոստանդյանի հայրը։ Նրա արժեքավոր հոդվածի մերօրյա քննություններում հեղինակի ինքնությունը մնում է

նում է հայերենը բարելավելու, ամենքին հասկանալի դարձնելու, համազգային լեզու մշակելու առաջարկը։ Որքան էլ դա դժվար է, այնուամենայնիվ, թերթը գտնում է, որ պետք է վերջ տալ տիրող անհոգությանը և միասնաբար լուծել լեզվի խնդիրը, այլ խոսքով՝ քաղաքացիություն տալ աշխարհաբարին։ Խ. Էքիզյանը նկատում է, որ «սակավակիրթ ազգերու մեջ անգամ այսքան անշուք աշխարհաբառ մը չկա» և կոչ է անում այն «շտկելու և կանոնավորելու համար» մեկտեղել ուսումնական ընկերությունների, դպրոցների, վանքերի, գիտնականների ջանքերը և ազգի միակամ հավանությամբ ամենուր կիրառել աշխարհաբարը։ Երեխան՝ դպրոց հաճախելու առաջին օրվանից, վարժապետը՝ աշակերտի հետ պետք է խոսեն «կանոնավոր աշխարհաբարով», «մաքուր հայերեն»՝ մոռանալով «անճոռնի հայերենը», մանավանդ «գտարազգի բառերը»։ Այսպիսի հարցադրումը, այն էլ գրապայքարը սկսելուց շատ տարիներ առաջ, չափազանց կարևոր է։ Դրանով և հենց աշխարհաբար իր լեզվով «Հայրենասերը» իր նպաստն էր բերում գրական արևմտահայերենին[3]։

Աշխարհաբարին քաղաքացիության իրավունք շնորհելու առաջարկը ինքնին համարձակ քայլ էր։ Բայց զմյուռնահայ գաղթօջախում նման խնդրի տեսակետը բնավ խորթ չէր և այդ առթիվ թերթի դեմ հակակրանք չարթնացավ, ինչպես դա տեղի ունեցավ այլուր՝ շատ տարիներ անցնելուց հետո։ Դրան հակառակ «Հայրենասերը» բուռն դժգոհություն առաջացրեց, երբ ընդհուպ մոտեցավ վաճառականության խնդիրներին։ «Առևտուրի մեջ իրարու օգնելու վրա» վերնագրով ոչ մեծ հոդվածի հեղինակը դարձյալ Խ. Էքիզյանն էր։ Անմեղ, ընդհանուր դատողություններ պարունակող հոդված է դա։ Եվրոպացիները լավ կարծիքի են հայ վաճառականների մասին. «Ես ալ... կհավատամ անոնց ըսածը. բայց մյուս կողմեն ալ կցավիմ տեսնալով, թե անոնց վրա բնավորյալ զանազան պակասությունները պատճառ կըլլան այն գովելի հանգամանքները անպտուղ ձգելու, և ավելի դժբաղդությունը այն է, որ հառաջադիմությանց արգելք ըլլալնեն ի զատ շատ երկիրներու մեջ ունեցած դերազանցությունները ալ պակսեցնելու առիթներն են» (№ 10)։ Խ. Էքիզյանը ցավով նշում է, որ հայ վաճառականներն արդեն զիջում են իրենց առաջնությունը և ետ մնալու «վտանգը օրեօր ավելանում» է։ Ցանկանալով, որ «իրարու գործ դյուրացնելու ազդասիրությունը ամենուն սրտին մեջ տեղ» գտնի, հեղինակը կոչ է անում վաճառականներին միավորվել, համատեղ ուժերով դիմադրել սպասվող սնանկությանը, նկատի ունենալ, որ եթե մի անգամ հայ վաճառականը կորցնի իր վարկը, այլևս չի կարողանա վերականգնել։ Հոդվածը, իհարկե, հրապարակախոսական շնչով է գրված, հարցադրումներում ինչ-որ սրություն կա, մտահոգությունը, որ արտահայտում է հեղինակը, նրա տողերից փոխանցվում է ընթերցողին։ Զգալի է նաև տագնապը հեռանկարի հանդեպ։ Այդքանով հանդերձ Խ. Էքիզյանը հանգես է բերել ակնառու զգուշություն և չի հիշատակել վաճառաշահ Զմյուռնիայի որևէ վաճառականի և հագիվ

չպարզված (տե՛ս Վ. Ա ճ ե մ յ ա ն, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 114, 120 և 137)։ Այս առթիվ տե՛ս «Արշալույս արարատյան», 11 նոյեմբերի 1878 (№ 1105)՝ Գր. Կոստանդյանի հոդվածի վերատպությունը։

3 Հրատարակվելով աշխարհաբար լեզվով, «Հայրենասերը» խուսափում էր թուրքերեն և օտար բառերից, աշխատում էր գործածել ավելի դյուրըմբռնելի լեզու և, ինչպես «Արշալույս արարատյանը», հոդվածներում ու տողատակ բացատրում էր անհասկանալի և հայերենին խորթ բառերն ու արտահայտությունները։

թե կարելի է նրա տողերի արանքում նշմարել որևէ մեկի դիմաստվերը։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանզի հեղինակը հենց վաճառականական դասից էր և արտահայտում էր ոչ միայն ազդեցիկ էքիզյան գերդաստանի առևտրական, այլև առհասարակ իր դասակարգային շահերը։

Հակառակ այդ ամենի Խ. Էքիզյանի հոդվածը փոթորիկ առաջացրեց զմյուռնիացի վաճառականների շրջանում։ Սկիզբ առան զանազան ենթադրություններ, հոդվածագրի անհասցե դիտողությունները և վերացական խորհրդածությունները հասցեագրվեցին որոշ վաճառականների, ոմանք տողամեջ ճանաչեցին իրենց։ Ավելի քան մի ամիս հոդվածը քննվում, հոլովվում էր զմյուռնիահայ համայնքում։ Տեղի տալով ընդհանուր դժգոհությանը, Զմյուռնիայի մյուս թերթը՝ Ղ. Պալդազարյանի «Արշալույս արարատյանը», զետեղից «Յ.»-ի նամակը[4]։ Ազդեցիկ է նամակի հեղինակը. նա պահանջում է անմիջապես տպագրել իր բանասիրականը, որ կնքել է անմեղ խորագրով՝ «Առևտուր»։ Շատ հին օրերից սկսելով, նա բավական երկարորեն հերքում է «հրապարակական գրողին»՝ Խ. Էքիզյանին, որի գրածներից «մարդուն գլխարկը վեր է թռչում»։ Նա պաշտպանում է «երևելի վաճառականներին» և բացեիբաց նկատում, թե նրանց դեմ ասված խոսքը «վտանգավոր հետևանքներ կբերի ըսողին վրա... Մեծ ու երևելի վաճառականներին հրապարակավ քար նետողը, նույն քարեն իր գլուխը թող պահե»։ Այդ երևելիներին պետք է միայն փառք տալ. ազգը առաջադիմում է նրանց «ձեռնատվությամբը ու պաշտպանությամբը», նրանք են ընկերությունները, դպրոցները, օրագրերը պահում։

Որքան էլ «Հայրենասերը» սկզբունքով մերժում էր «վիճաբանական գրվածները», պարտավորված զգաց զետեղել Խ. Էքիզյանի պատասխան նամակը։ Նա էլ է մերժում բանավեճը մամուլում, անօգուտ է համարում նման նյութերը և գտնում է, որ մամուլի համար «ամենեն զզվելին բանադատության և վիճաբանական գործիք ըլլալն է»։ Ընթերցողին հավատացնելով, որ իր նպատակը սոսկ իր պատիվն պաշտպանելն է, Էքիզյանը մանրամասն հերքում է «Յ.»-ի խորհրդածությունները։ Նա մասնավորապես նկատում է, թե իր միտքը ծուռ ըմբռնող հեղինակը համախոհներ է հավաքել իր շուրջը, «գարշելի դաշինք» է հաստատել և հավատացրել, թե քննադատությունը նրանց հասցեին է ուղղված։ Հազիվ թե կարելի է Էքիզյանի՝ այս տրամաբանությամբ հյուսված պատասխանը բավարար համարել, բայց նա իր նամակի վերջում առաջ է քաշում կարևոր սկզբունք՝ մերժելով ընդդիմախոսի այն պահանջը՝ թե «ով որ կսիրե ազգը, ամեն անգամ և ամեն բանի մեջ առանց այլևայլության գովել պետք է զանի»։ Ըստ երևույթին «Հայրենասերի» խմբագիրը ևս գոհ չէր իր երիտասարդ ժուռնալիստի պատասխան նամակից։ Նա թերթի հենց նույն համարում

---

4 Ենթադրում ենք, թե «Յ.» ծածկանվան տակ հանդես է գալիս Եուսուֆյան վաճառականական գերդաստանի անդամներից մեկը (թերևս Յոսեփ Եուսուֆյանը)՝ նպատակ ունենալով հնարավոր ենթադրություններից պաշտպանել Տրիեստում իրենց վաճառատունը հաստատած, մեծ ազդեցություն ունեցող, Եգիպտոսի առևտրական շահերը ներկայացնող Պողոս Եուսուֆյանին։ Դա ակնառու է դառնում այն բանից, որ «Արշալույս արարատյանը» № 154-ում նշում է, թե «հիշյալ Յ. աղայի վսեմաշուք ազգականներուն» շնորհիվ են Մեսրոպյան վարժարանում դասավանդվում ֆրանսերեն և անգլերեն լեզուները, թե Խ. Էքիզյանը, նրա եղբայրներն ու ազգականները Եուսուֆյանների «մարդասիրական օգնությամբ կսորվին» («Արշալույս արարատյան», 3 սեպտեմբերի 1843)։

հրապարակել է «չեզոք» մի հոդված՝ «Հակառակասեր գիտուն մարդու բնավորությանը վրա», որտեղ նման անձնավորությանը համեմատում է «յոթ գլխով հիդրայի» հետ, որի գլուխն անհնար է խոնարհեցնել «ո՛չ հացով և ո՛չ քարով, ո՛չ վարդով և ո՛չ սրով», նրան համադրում է նախաքրիստոնեական «չար մարդու»՝ Զոյիլոսի հետ, որին իր գրվածքների հետ այրեցին հենց Զմյուռնիայում։ Նրա դեմ ուղղված չափածո սատիրան խմբագիրն ըստ էության հասցեագրում էր իր թերթի հակառակորդներին։

Առաջին լուրջ և բացահայտ բանավեճն է դա մեր մամուլում, երբ իրար դեմ հանդես են գալիս երկու հրապարակախոսներ և երկու պարբերականներ՝ թեև չտարբերակված սկզբունքներով, բայց արդեն պարզորոշ ընդդիմախոսությամբ։ Զուտ մամուլի պատմության ու հրապարակախոսության ձևերի կիրառման իմաստով հետաքրքրական լինելուց բացի այն ուշագրավ է նաև հակադիր կողմերի երևան գալու առումով. Զմյուռնիայի երկու թերթերում հանդես էր գալիս, այսպես ասած, երիտասարդական և ծերունական մտածողությունը, որ հետագայում պետք է վերածվեր երկու հակադիր կողմերի ճակատային բախման։ Այժմ՝ 1843-ին բախումը տեղի ուներ միմիայն «Հայրենասերի» և «Արշալույս արարատյանի» միջև, որևէ այլ պարբերական, որ կարող լիներ միջամտել այդ բանավեճին, դեռ չկար[5]։ Հակառակ դրան, բանավեճը դուրս եկավ Զմյուռնիայի շրջանակից, ունեցավ որոշ արձագանք, նույնիսկ իր հետևանքով բնորոշ դարձավ հայ մամուլի համար։

Իրենց հերթական համարներում, որ լույս տեսան միաժամանակ՝ սեպտեմբերի 3-ին, երկու պարբերաթերթերը շարունակեցին բանավեճը՝ դիմելով արդեն տարբեր ձևերի։ «Հայրենասերը» հրապարակեց Կ. Պոլսից ստացած մի նամակ՝ «Ն. Մ. Ջ.»[6] ստորագրությամբ, հույս ունենալով, թե այն հաճելի կլինի ընթերցողներին և «վիճաբանություն սիրող բանադատներուն՝ ալ՝ իրենց կիրքերը մեղմելու արժանավոր հորդոր մը պիտի ըլլա»։ «Արշալույս արարատյանը» Զմյուռնիայի «հայազգի երևելիներուն հատուկ խնդրանքը» հարգելով, տպագրեց հենց նրանց պատկառազդու ստորագրությունները կրող նամակ՝ երկտող բացատրությամբ հայտնելով, թե «պարտավորվեցանք հրատարակել»։ Միաժամանակ հրապարակված այդ երկու նամակները և նրանց կցված բացատրությունները վավերացնում են երկու թերթերի հակադիր դիրքորոշումը և, որ առավել կարևոր է, գոյություն ունեցող տարբեր մտայնությունը՝ տակավին 1840-ական թթ. սկզբին։ «Հայրենասերի» դիրքը որոշակի է. նրա համար իրեն դիմող հեղինակը «ազգասիրական ոգով» է ղեկավարվում, «աղնվամիտ» է և նրա նամակը շնորհակալությամբ է տպագրում, չի թաքցը-

---

5 Իրենց բնույթով 1843-ին հրատարակվող «Շտեմարան պիտանի գիտելյաց», «Հայտարար գիր լրոյ» և «Բազմավեպ» պարբերականները հեռու էին իրական կյանքի առաջադրած հարցերին արձագանքելու խնդրից, հետևապես հեռու մնացին «զմյուռնիական» բանավեճից։ Այլ պարբերականներ այդ և հաջորդ՝ 1844 թ. լույս չէին տեսնում։

6 Այդ սկզբնատառերով անշուշտ հանդես էր գալիս Նիկողայոս Զորայանը (1821—1859)։ 1849—1850 թթ. և հետագայում հրատարակած գրքերը նա ստորագրում էր «Ն. Մ. Զ.» կամ «Նիկողոս Մ. Զորայան» (տե՛ս մասնավորապես «Հիսուսի վարուցը համառոտ պատմությունը» և «Վարք Հիսուսի» Կ. Պոլսի հրատարակությունները), իսկ դրանից առաջ «Բազմավեպում»՝ «Մ. Նիկողայոս Զորայան» (տե՛ս «Բազմավեպ», 1848, № 13), «Արշալույս արարատյանում»՝ «Ն. Մ. Զորայան» (տե՛ս «Արշալույս արարատյան», 15 ապրիլի 1849, № 335)։ Ն. Զորայանն, այսպիսով, հրապարակախոսական իր սկզբնաքայլը կատարել է «Հայրենասերում», 1843-ին։

նում, որ նպատակ ունի արժանին հատուցել «բանադատներին»։ Մինչդեռ «Արշալույս արարատյանը» հանդես է գալիս «չեզոք» դիրքով, կարծես թե սոսկ տեղի տալով ազդեցիկ համաքաղաքացիներին, ակամա է մասնակցում բանավեճին։ Դա Ղ. Պալդազարյանի ի սկզբանե որդեգրած տակտիկան էր. ուզում է հանդես բերել «օբյեկտիվություն», թերթը վարել անկողմնակալ՝ չեզոք դիրքերից, բայց և ամեն հարցում և ամեն անգամ անցկացնել իր քաղաքականությունը, որ տվյալ դեպքում բխում էր երևելիների շահերից և որը դարձյալ պահպանողականությունն էր։

Հայ հրապարակախոսության համար առավել կարևոր է երկու հակադիր մտայնության երևան գալը, այն մոտեցումը, որ հանդես են բերում երկու նամակների հեղինակները և երկու թերթերի խմբագիրները՝ հրապարակային բանավեճի նշանակության նկատմամբ։ Եթե մի պահ ընդունելու լինենք, որ այդ նամակների նախաձեռնողները գուցե և համապատասխան թերթերի խմբագրություններն էին, ասենք՝ նրանց խմբագիրները, դարձյալ չենք կարող կարևորություն չտալ հայ մամուլի էջերում, այսպես ասած, աշխարհիկ խնդիրների շուրջը ծավալված այդ առաջին բանավեճին[7]։ Սկզբունքային նշանակություն ուներ այն, որ «Հայրենասերի» նամակագիրը լիովին պաշտպանում է թերթի ուղեգիծը։ Նրա «վերատեսչին» հղած նամակում «Ն. Մ. Զ.»-ն (Նիկողոս Զորայանը) այսպես է բնութագրում թերթը և նրա հրատարակիչների աշխատանքը. «Օրագիրնիդ շաբթե շաբաթ շնորհակալությամբ կկարդամ... հայրենյացս օգուտը ի վաղուց հետե փափաքներուս կեդրոն ըրած եմ... անխոնջ եռանդվնիդ արժանապես պարագլուխ եղաք հայրենասիրաց և հոմանուն օրագիրդ ալ՝ իբրև դրոշակ մը ազնվահոգի գունդերնուդ և իբրև ջահ մը առաքինի սիրտերը վառելու համար ձեռքդ առիր ու հայրենիքներուդ մեջ թմրած ու պաղած սիրտերը վառելու ու զորացնելու կչանաք» (№ 15)։ Նամակագիրը «Ֆոիբիֆան» համարում է «մոտա» և կոչ է անում հանդես բերել քաջություն, «հաղթել ու իր նպատակին հասնել», հորդորում է չվհատվել։ Իրարից զանազանելով «Ֆոիբիֆա ընողներին» և «ճշմարիտ քննիչներին», նամակի հեղինակը վերջիններին բնութագրում է իբրև «կիրթ ախորժակ, խելք, դատում, անբավ հմտություն» ունեցող, շատ կարդացած և Արիստոտելի անկողմնակալությամբ օժտված անձնավորություններ։ Նա ցավում է, որ «լոկ հանդիսատես» է և, Կ. Պոլսում բնակվելով, չի կարող գործակցել խմբագրության հետ, բայց նաև հավաստում է՝ «սիրտերնիս ու միտքերնիս ձեր վրա է, ամեն մեկ շարժումնիդ մեյմեկ զգացում կուտա սիրտերնուս»[8]։ Մամուլի դերի այնպիսի ըմ-

---

7 Թ. Ավդալբեգյանը գտնում է, որ «Ազդարարի» էջերում տարբեր ծածկանուններով հանդես եկող նրա իսկ աշխատակիցների մղած բանավեճը «ժամանակագրական կարգով առաջին բանավեճն է հայ մամուլի տարեգրության մեջ» և այդ հարցին առանձին հոդված է նվիրել (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 250 և «Սարք», 1924, գիրք 7)։ Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր ծածկանուններով հանդես էր գալիս «Ազդարարի» միևնույն աշխատակիցը՝ հենց ինքը՝ խմբագիր Հ. Շավոնյանը, որ բանավեճը պարզապես հարմար ձև էր անհրաժեշտ գաղափարները շեշտված ձևով պրոպագանդելու համար, «բանակռվողները արծարծում և պաշտպանում են միևնույն գաղափարներ» (տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հ. 1, Երևան, 1956, էջ 217—225 և հտ.)։

8 Նկատենք, որ Ն. Զորայանը տարիներ անց հանդես եկավ մամուլի դերի մասին ընդարձակ ու բանիմաց գաղափարներով և հանգամանորեն բացահայտեց պարբերական հրատարակությունների մեծ դերը ժողովրդի առաջադիմության գործում։

բռնումը, նրա էջերում մղվող բանավեճի նման գնահատությունը և այս համակրանքն ու պաշտպանությունը, որ ցուցաբերում էր ընթերցողը թերթի նկատմամբ, էական նշանակություն ունեին առաջադիմական մամուլի և համարձակ, հրատապ խնդիրներ առաջադրող ժուռնալիստների համար։

Իսկ ի՞նչ դիրքերից էին հանդես գալիս սրտնեղած երևելիները «Արշալույս արարատյանի» ձայնակցությամբ։ Նրանք շտապում են խրախուսել «Ց.»-ին, որ պաշտպանում է «իր վսեմափայլ քեռիներուն պատիվը», իսկ Խ. Էքիզյանին մեղադրում են «բարեպաշտության, անկեղծության, և որ ամենեն մեծն է՝ երախտագիտության» դեմ մեղանչելու մեջ, կրկնում են նույն ազգու փաստարկը, թե «Հայրենասերի» հոդվածագիրը «կթշնամանե հայազգի բոլոր զմյուռնիացվոց բարերարին..., որ տարուց տարի մշտնջենավորապես բավական գումար ստակ կվճարե մեր դպրատան հառաջադիմության համար»[9]։ Սակայն մամուլում հանդես եկող նույն երևելիները չէին գոհանում դրանով։ Նրանք գտնում էին, որ հարկ էր առհասարակ ժուռնալիստի «լեզվին ու իր ապերախտությանը գոնե քիչ մը չափ գնել», մանավանդ, որ նա կրկին հանդես գալով նախատել է «Ց. մեծաշուք աղային» և դրանով «ալ ավելի իր հանցանքը կծանրացնե»։ «Անաչառ» դատաստան պահանջելով, նրանք ցավում են նույնիսկ Էքիզյանի գերդաստանի պատվի համար։ Ոչ մեծ այդ նամակի տակ շարված է Զմյուռնիայի տարեկան հոգաբարձուներից Ց-ի և «հայոց հասարակության» երևելիներից 37-ի ստորագրությունը, շարքն ավարտվում է «և այլն, և այլն»-ով։ Քաղաքի հայտնի մեծատուններից միայն Գրիգոր Կոստանդյանի ստորագրությունն է պակասում այդ ցանկում, որին շուտով ձոներգեր պիտի նվիրվեն «Արշալույս արարատյանում»։

Այսպիսով, նորաստեղծ «Հայրենասերի»՝ սկսած նրա 10-րդ համարից, և երիտասարդ ժուռնալիստ Խ. Էքիզյանի դեմ ծառացավ երևելիների գրեթե ամբողջ բանակը՝ «Արշալույս արարատյանի» և նրա խմբագրի վատ քողարկված զինակցությամբ։ Գոտեմարտն անհավասար էր ու հայտնի չափով նաև ճակատագրական։ «Հայրենասերի» շուրջն առաջացած աղմուկը նոր թափով ծավալվեց։ Թերթի հաջորդ՝ 16-րդ համարի տպագրությունը, տպաքանակի հաշիվ քառորդ մասը տպագրվելուց հետո, խափանվեց՝ հավանաբար «ներողամտության» կոչ անող նույն երևելիների ջանքերով։ Իզմիրի և մի շարք քաղաքների բաժանորդները չստացան թերթի հերթական համարը, միայն Կ. Պոլսի և Տրիեստի ընթերցողների մի մասին հնարավոր եղավ ժամանակին առաքել թերթի սեպտեմբերի 10-ի օրինակներից։ «Հայրենասերի» հոկտեմբերի 8-ի համարից հայտնի է դառնում, որ սեպտեմբերի ընթացքում՝ «ամիսն մը ավելի», իրար էր անցել ամբողջ գաղթօջախը և գործը հասել է Զմյուռնիայի կառավարիչ Համտի բեյին։ Կարելի է ենթադրել, որ թուրք կառավարիչի օգնությանն են դիմել նույն երևելիները և նա, ինչպես գրում է «Հայրենասերը», «իր խոհական կարդադրությամբը խնամք տարավ հանդարտելու և հասարակության մեջ անզգուշաբար եղած շշունչները խափանելու»։

---

9 «Արշալույս արարատյան», 3 սեպտեմբերի 1843, № 154։ Հարգանքի տուրք հատուցելով ազգային բարերարներին, Ղ. Պալդազարյանը, որ ուներ սեփական ոչ մեծ վաճառատուն, զուտ դասակարգային, իր շահերից ելնելով պետք է որ համերաշխվեր Խ. Էքիզյանի հետ, պաշտպաներ մանր առևտրականների շահերը։ Տվյալ դեպքում, սակայն, նա մտահոգված էր իր թերթի պահպանությամբ։

Դեպքերն ըստ երևույթին ավելի լուրջ բնույթ էին ստացել, քան կարելի է ենթադրել այդ հաղորդումից։ Բորբոքված հասարակությանը խաղաղեցնելուն միջամտեց նաև Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ (հետագայում կաթողիկոս) Մատթեոս արքեպիսկոպոսը։ Շրջակա հայաբնակ գյուղերում հինգամսյա շրջագայությունից հաղիվ վերադարձած, հոկտեմբերի 15-ի կիրակի օրը նա Ս. Ստեփաննոս եկեղեցում «շատ ազդու քարոզ մը տալով», կոչ արեց երևելիներին «միաբանությունը վերստին հաստատելու և հասարակության մեջն ալ եղած այլ և այլ տարաձայնությունները բոլորովին վերջացունելու»։

Հրապարակված նյութերը ավելին չեն հաղորդում գաղթօջախի երևելիների և հասարակության ներքին բախումների մասին։ Տարակույս չի կարող լինել, որ նրանց միջև երևան եկած սուր բնույթի տարաձայնությունները սոցիալական հիմք ունեին։ Համենայն դեպս ակնհայտ է, որ պայքարը մղվում էր մի կողմից մամուլի դեմոկրատական իրավունքները հաստատելու, մյուս կողմից՝ այդ մամուլը կաշկանդելու, նույնիսկ խափանելու համար։ Որքան էլ իրավացի լինեին «Հայրենասերի» անմեղ գիտողությունները, պարզ է, որ դրանք շոշափում էին մեծատունների վարկը, սասանում էին ամիրայական դասի ներկայացուցիչների ավանդաբար վայելած հեղինակությունն ու անքակտելի ազդեցությունը գաղթօջախի բոլոր հասարակական գործերում։ Լրագրական, կարելի է ասել, պարզ բանավեճը փաստորեն երևան էր հանել այդ բանավեճի շրջանակից դուրս գոյություն ունեցող հակասությունը ունևոր դասի ու անձեռնմխելի բարերարների և նրանց անվերապահությամբ երկրպագելու պարտքի տակ կքած հասարակության ու նոր-նոր երևան եկող դեմոկրատական հակումների միջև։

Բարեհաջող վախճանով «Հայրենասերը» ուրախ էր, բայց և հարկ համարեց հոկտեմբերի 8-ի համարում էլ զետեղել երկու փոքրիկ բարոյական զրույցներ՝ բնորոշ վերտառությամբ՝ «Զրպարտություն» և «Անկողմնասիրություն», որոնցում քարոզում էր խոհեմությամբ համբերել և խաղաղություն հաստատել։ «Արշալույս արարատյանը», որ երևի դեպքերի ընթացքին անտեղյակ չէր, դարձյալ լռում էր, նույնիսկ կողմնակի ակնարկներ չէր անում տեղի ունեցածի շուրջը։ Բայց՝ այդ լռությամբ ու չեզոքությամբ նա ավելին էր ասում. դրանով նա շահում էր առնվազն իր գոյության իրավունքը։ Մինչդեռ «Հայրենասերը», ինչպես պարզվում է 1844 թ. մայիսի 6-ին (№ 26) լույս տեսած համարից, որտեղ ոչ մեծ ծանուցում է զետեղված թերթի տարելիցի մասին, «հինգ ամսի չափ»՝ 1843 թ. հոկտեմբերի կեսից մինչև 1844 թ. ապրիլի կեսը, խափանվել էր։ Չպարզելով խափանման պատճառները, թերթն ընթերցողներին սփոփում էր նրանով, որ նրանց բաժանորդագրության ժամկետը հինգ ամսով երկարաձգվում է, որով կհատուցվի չստացված համարների դիմաց։ Ինքնին պարզ է. երևելիները հասել էին իրենց նպատակին՝ դեմոկրատական «Հայրենասերը» նրանց ջանքերով պատժվել էր[10]։

---

10 Ի դեպ, ինչպես նշվում է մի ուսումնասիրության մեջ, առաջին բանավեճը թուրքական մամուլի էջերում տեղի է ունեցել 1860 թ. վերջերին, իսկ 1860-ական թթ. սկզբներին հալածանքների են ենթարկվել խմբագիրներն ու թուրքական մամուլի առանձին օրգաններ (տե՛ս А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729—1908 гг.), М., 1972, стр. 72, 78 и сл.).

Այդպիսի վախճան ունեցավ հայ մամուլի էջերում մղված առաջին բացահայտ բանավեճը, այն բախումը, որ առաջացավ պահպանողական «Արշալույս արարատյանի» և նոր-նոր երևան եկող դեմոկրատիայի օրգանի՝ երիտասարդական «Հայրենասերի» միջև։

Լրագրական այդ բախումից, սակայն, չի կարելի հետևություն անել, թե «Հայրենասերը» առհասարակ հակադրվելու հակում ուներ, թե նա ձգտում էր նսեմացնել «մրցակից» «Արշալույս արարատյանին»։ Ընդհակառակը, «Հայրենասերը» և նրա խմբագիրը ամեն կերպ ձգտում էին դրացիական կապ պահպանել «Արշալույս արարատյանի» հետ, ինչպես հակված էին ի սկզբանե և ինչպես այդ մասին ազդարարված էր թերթի առաջին իսկ հոդվածներում (№ 2) և ընկերության հայտարարության մեջ (№ 5)։ Վերոհիշյալ բանավեճի հետևանքով, անշուշտ, սրվել են նրանց հարաբերությունները։ Եվ դա այնքան ակնառու էր, որ շատ տարիներ անց՝ 1861-ին, սուր բանակռիվ մղելով «Արշալույս արարատյանի» դեմ, «Մեղուն» ընթերցողներին հիշեցնում էր «ազատամիտ Խ. Մելիք Սելիմոֆի» հրապարակած «Հայրենասերի» մասին՝ գտնելով, որ այն դարձավ «բռնաբարության զոհ»[11]։ Բայց երկու թերթերի բավարար հարաբերությանը խանգարում էին ավելի շատ ինչ-որ «ոսոխներ», որոնց մասին ակնարկում է «Հայրենասերը»։ Երբ թերթի 30-րդ համարի 117 օրինակը չհասավ Կ. Պոլսի բաժանորդներին ու ենթադրվում էր, թե կապոցը «անխիղճ ժանյաց որս եղեր է», Զմյուռնիայում լուրեր տարածվեցին, թե այդ ակնարկը վերաբերում է «Արշալույս արարատյանի» խմբագիր Ղ. Պալդազարյանին։ Անհայտացած կապոցը գտնվելուց մեկուկես ամիս առաջ «Հայրենասերը» հերքեց այդ լուրերը և գրեց, որ «սիրո կապը»[12] իր և «Արշալույս արարատյանի» միջև վերականգնված է (№ 35)։

Ամեն կերպ ձգտելով տարաձայնությունների տեղիք չտալ, «Հայրենասերը», սակայն, չէր ընթանում այն ուղիով, որ արդեն ավանդական էր դառնում «Արշալույս արարատյանի» համար։ Ինքնուրույն ուղեգիծ վարելու «Հայրենասերի» տակտիկան առավել ակնհայտ է դառնում, երբ հետևում ենք նրա հարցադրումներին մի շարք էական խնդիրների շուրջը։ 1844 թ. օգոստոսի 19-ի համարում թերթը հատուկ անդրադարձել է «երգիծաբանությանը» և մատնանշելով, որ մեզանում դեռ երգիծական «ընտիր ու երկար գործ մը դուրս եկած չէ», առաջ է քաշում ժանրի զարգացման անհրաժեշտության հարցը, տպագրում է որոշ նմուշներ (№ 41)։ Զմյուռնիայի հունական մի դպրոցի վերաշի-

11 «Մեղու», 20 մարտի 1861, № 128, էջ 71—76։

12 «Սիրո կապ»։ վերականգնման տակ պետք է հասկանալ երկու թերթերի միմյանց չհակադրվելը։ Այդպիսի համերաշխությունը, սակայն, չէր խանգարում, որ «Հայրենասերը» երբեմն փաստական ուղղումներ մտցներ «Արշալույս արարատյանի» հրատարակած նյութերում, հակադրվեր նրան, ճշգրտեր առանձին վրիպումներ։ Հետաքրքրական է, օրինակ, հետևյալ ճշգրտումը։ Հենվելով «Արշալույս .արարատյանի» հրատարակած հոդվածի վրա, «Հայրենասերը» հաղորդում է տպագրել այն մասին, թե Երուսաղեմ և Կ. Պոլիս է այցելել «բարեհամբավ աղա Գրիգոր Այվազովսկին», որը խոստացել է վերաբացվելիք Իսկյուտարի ճեմարանին հատկացնել 100.000 ղուրուշ մայր գումար։ Մոտ մեկ ամիս անց թերթը ուղղում է, որ ռուսաց կայսերորդու հետ Կ. Պոլիս, ապա և Զմյուռնիա է այցելել ոչ թե Գրիգոր Այվազովսկին, այլ «հռչակավոր պատկերահան» Հովհաննես Այվազովսկին։ «Արշալույս արարատյանը», որ իր ընթերցողներին առաջներում պատմել էր Հովհ. Այվազովսկու մասին, ուղղում չի տվել։ Մեծ ծովանկարչի հետ կապված այս փաստերը, որ վկայում են գաղթաշխարհի հետ նրա ունեցած շփումների մասին, արժանի են նկարչի կենսագիրների ուշադրությանը։

նության առիթով «Հայրենասերը» փաստորեն հարուցում է կրթական գործի վերակառուցման, դպրոցը դիտական-ուսումնական իսկական օջախ դարձնելու հանդուցային խնդիրը։ Հունական թերթից արտատպված հոդվածում այսպես է դրվում հարցը. «Սոսկ շինվածով կկատարելագործի՞ արդյոք մեր այս գործը», չորս պատերը կծառայե՞ն սովորողների «մտածության պաշարը պատրաստելու, ո՛չ արդարև»։ Հարկավոր են դաստիարակներ, վարժապետներ, ուսուցիչներ։ Չոր քերականություն ուսուցելը քիչ է։ Դպրոցը պետք է ունենա «քաջագետ մաթեմատիգոս մը, բնական գիտության դասատու մը, դոնե մեկ ալ եվրոպական լեզվագետ մը» և այլ առարկաների դասատուներ։ Դրա համար անհրաժեշտ է ստեղծել հոգաբարձություն, որ իր ձեռքը վերցնի ուսման ու դաստիարակության գործը (№ 51)։

Անշուշտ ինքնանպատակ չէ Մարկոս Ավրելիոսի հանրահայտ նամակներից մեկի տպագրությունը «Հայրենասերի» սեպտեմբերի 4-ի համարում. կախաղան են հանվում անմեղները, իսկ նրանց մահվան դատապարտողներն ավազակներ են։ Բռնատեր հռոմեացիներին ներկայացվող պահանջները համահնչուն են արևմտահայության այնօրյա պահանջներին՝ «կամ մեր պահանջմունքը և իրավունքը սահմանեք, կամ մեր կյանքը մեզմե վերցնեք, որպեսզի ազատինք», և ապա՝ «ճշմարտախոսությունը արգելել օրենք չէ» (№ 52)։ Նույնպիսի այլաբանություններ կան նաև թերթի մի շարք հրապարակումներում։

Կարևոր է ընկերություններ հիմնելու (Ֆրանսիայի օրինակին հետևելով) և այդ առթիվ Զմյուռնիայի Սյունյաց ընկերության գործունեությունը ծավալելու, ինչպես և աղքատների նկատմամբ խնամք տանելու համար հատուկ ընկերություն ստեղծելու մասին «Հայրենասերի» սկզբունքային առաջարկությունը (№№ 70, 76)։ Դարձյալ ֆրանսիական առաջավոր մեթոդների օրինակով, «Հայրենասերն» արծարծել է «ուսումնականության և վաճառականության» զարգացման խնդիրները, առաջ է քաշել կանանց կրթության հարցը (№ 73)։ Առավել նպատակասլաց ու հրատապ են այն խնդիրները, որ քննել է թերթը «Ցոյց ազգասիրության» անստորագիր, բայց Խ. Մելիքսելումյանցին պատկանող հոդվածում (№ 96)։ Գաղթօջախի հասարակական կյանքի ու կարծիքի կազմակերպման նպատակ հետապնդելով՝ «Հայրենասերն» այդ հոդվածում սկզբունքային հարց է առաջ քաշում՝ ունենալ սեփական կարծիք, հանդես բերել ինքնուրույն մոտեցում, ղեկավարվել «ո՛չ կուրորեն նախապաշարմունքով... և ո՛չ ալ՝ տղայական փոփոխամտության գերի» դառնալով։ Դրանով նա ըստ էության վերադառնում և պաշտպանում էր 1843-ին Ն. Զորայանի առաջ քաշած սկզբունքը՝ «մեկ բանը չի դատած՝ չեն քններ, նախ կդատեն՝ ետքը կքննեն և հետևաբար... կսխալին...» (№ 15)։ «Իմ խոսմս ըլլա» սկզբունքով բռնավորները սպառակտում են ազգը, ոգևորում նրա «ներքին և արտաքին թշնամիներին»։ Երկպառակությունը և անմիաբանությունը վերջին հաշվով վնասում է ազգի «հառաջադիմության ու պայծառության»։ Իր գաղափարն ավելի շոշափելի դարձնելու համար Մելիքսելումյանցը պատմում է այն մասին, թե ինչպես է վարվում խորտակվող նավի նավապետը. նա իր ձեռքն է վերցնում ղեկը, նույնիսկ զոհում է թանկարժեք ապրանքները՝ առաջին հերթին ծով նետելով «իր անձին հարկավոր խոհանոցը... որպեսզի չուտել ու չխմել», մինչև նավը չազատի ալեկոծությունից, «քաղցր բանիվ» խրախուսում, քաջալերում է ամենավերջին նավաստուն անգամ։ Այդպես նա իր նավը՝ նա-

վաստիներով, և հենց իրեն ազատում, հասցնում է «ցանկալի նավահանգիստը»։ Ահա թե ինչպես է այնուհետև գրում «Հայրենասերը»՝ խոսքն ուղղելով ազգին ու ազգապետերին. «Եվ ո՞վ չգիտեր, թե տարվոյս եղանակներուն ընթացքը միշտ փոփոխվելու վրա են, և ոչ մեկը շարունակաբար կրնան տիրել աշխարհիս վրա։ Դժվարավաստակ ձմեռը կանցնի, ետևեն ցանկալի գարունը անուշահոտ ծաղիկներով հառաջ կուգա, որուն ետևեն զվարճալի աշունը տիրելով՝ կճոխացուցանե կերպ-կերպ բերքերով ու կզովացնե առատ անձրևներով. ուստի հայտնի է՝ թե որ մարդս այն պատվական եղանակներուն մեջ պետք եղած նախապատրաստությունը հոգա նե, ետքը ձմեռը նորեն վրա գալուն անդամ՝ անոր խստությանը կրնա տոկալ ու ավելի ալ չի խռովիր։ Վերջապես երջանիկ է այն ազգը, որոնց մեջ իմաստուն անձիքներ միշտ պակաս չեն և գիտեն ինչևիցե դիպվածի մը մեջ խոհեմությամբ կառավարել հասարակությունը, ամենևին ականջ չի դնելով թե՛ ներքին ու թե՛ արտաքին թշնամյաց զրպարտություններուն»։ Ազգը, խորհրդածում է «Հայրենասերի» խմբագիրը, «հմուտ բժշկի մը կկարոտի», որովհետև եթե շտապ խնամք չտարվի, նա կամ կդատապարտվի տարաժամ մահվան կամ «դժվարաբուժելի ախտից գերի ըլլալով, միշտ կտանջվի»։ Հատկանշական է, որ թերթում այդ խորհրդածությունները երևան եկան հենց գաղթօջախի նոր հոգևոր առաջնորդի ժամանման նախօրերին։

«Հայրենասերի» էջերում հրատապ հարցերի բարձրացմանը մեծապես նպաստում էր նաև թերթի Կ. Պոլսի գործակալ Մկրտիչ Աղաթոնյանը (1820—1890)։ Հրապարակային առաջին քայլերն անելով, նա հաճախ էր նամակներ, թղթակցություններ հրատարակում թերթում, օգտվում էր խմբագրի վստահությունից, իր ազդեցությամբ նպաստ էր բերում «Հայրենասերի» տարածմանը։ Թերթում հրատարակված իր առաջին ատենախոսությունում նա շեշտը դնում է «ճշմարիտ հայրենասիրական ոգու» վրա և ընդգծում, որ «հայրենյաց և ազգին սիրույն» յուրաքանչյուրը պետք է նվիրի այն, ինչ ունի՝ «թե որ ուսումնական ենք՝ սորվածնիս, թե որ առաքինի ենք՝ առաքինություններնիս, թե որ հարուստ ենք՝ հարստություններնիս»։ Ի դեպ, նրա կոչին հետևելով հայտնի բժիշկ և մտածող Ան. Փոփովիչը խոստանում էր ձրիաբար սպասարկել Կ. Պոլսի Խասգյուղի դպրոցի սաներին։ Հատկապես պետք է շեշտել, որ Մ. Աղաթոնյանը «Հայրենասերում» հրատարակված իր անդրանիկ հոդվածներից մեկում բարձրացրել է ժամանակաշրջանի հայ իրականության համար հանգուցային այն հարցը, որ անհրաժեշտ է լուսավորված ազգերի օրինակով հաղթահարել կրոնական դավանանքի տարբերությունները և վերջ տալ ազգը ջլատող տարաձայնություններին։ Նա առաջինն է, որ մամուլում հռչակեց կրոնը և ազգը իրար հետ չշփոթելու սկզբունքը, բանաձևելով՝ «Այլ է կրոնք, այլ է ազգը», սկզբունք, որ մի քանի տասնամյակ պաշտպանվում ու արծարծվում էր հայ դեմոկրատական մամուլի էջերում, մասնավորապես Ստ. Ոսկանյանի և Մ. Նալբանդյանի հրապարակախոսական հոդվածներում։

Հայ հետագա մամուլի համար արմատական նշանակություն ստացավ նաև սկզբնապես «Հայրենասերում» բարձրացված մի սկզբունքային հարց։ Դարձյալ այլաբանական ենթատեքստով գրված մի հոդվածում թերթը հավուր պատշաճի պատմում է այն մասին, որ եվրոպական երկրները, «մանավանդ Ֆրանսիան, բարեկարգությամբ կպարծենան»։ Սակայն այդ երկրները ունեն նաև թերություններ և, ընդգծում է «Հայրենասերը», «օրագիրներն ալ

չեն լռեր անոնց վրայոք իրենց պարտավորությունը գործի դնելու, այսինքն կսկսին իրենց ազգին ու հայրենիքներուն մեջ մտած ու շատցած անկարգությունը անաչառապես հրատարակելու»։ Եվրոպական երկրներում իրենց ազգային պակասությունները բացահայտողները, հատուկ նշում է թերթը, ոչ թե թեթևամտորեն «հայրենատյաց կհամարվին, այլ ընդհակառակը՝ ճշմարիտ հայրենասեր»։ Մեկը, ով ուզում է լինի, եթե միայն փառաբանում է ձեռք բերված առաջադիմությունը, նախնիների քաջության «ու հին ավերակներովը կպարծենա նե, անոր ազգասեր չըսվիր», քանզի ամեն ազգ էլ ունի նաև իր «պարսավելու բաները»։ «Ուստի ազգասեր անձը, երբ որ հարկը կպահանջե», պետք է, անշուշտ, ցույց տա ազգային առաջադիմությունը, «բայց և այնպես ալ իր ազգին մեջ դժբաղդաբար սպրդյալ գեշ սովորություններուն վրայոք անդամ չի լռեր, կարճ խոսքով՝ առաջինը պարտք կսեպե ընել և մեկալն ալ թող չի տար» (№ 93)[13]։ Այսպիսով, առաջ քաշելով ազգային թերություններն ու պակասությունները հրապարակայնորեն քննադատելու հրատապ հարցը, «Հայրենասերը» եվրոպական մամուլի օրինակի հիման վրա պաշտպանում էր հայ մամուլի իրավունքի դեմոկրատական սկզբունքը՝ հանդես գալ կյանքի և իրականության խոցերի բացահայտմամբ, հրապարակախոսական միջամտությամբ նպաստել դրանց վերացմանը։ «Ահա այսպես գիտեն,— գրում է անստորագիր հոդվածի հեղինակը՝ Խ. Մելիքսելումյանցը[14],— Եվրոպայի խել մը օրագիրները իրենց ազգին ու հայրենիքին վրայոք անկեղծաբար շարժիլ», ապա շեշտում անհատական օրինակի մեծ նշանակությունը, արձանագրում, որ «գործը՝ խոսքեն ավելի ազդու է»։ Տեղն ու տեղն էլ Մելիքսելումյանցը քննադատում է խաղամոլությունը՝ «գեշ սովորություն», որ մեծ տարածում ուներ։

Շուտով դադարելու հետևանքով «Հայրենասերն» ի վիճակի չեղավ գործնական հողի վրա դնել իր ծրագրային հարցադրումը։ Տարիներ հետո, սակայն, այդ սկզբունքը դարձավ հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլի ելակետը, իսկ Ստ. Ոսկանյանը, որ հավանաբար «Հայրենասերի» ակտիվ ընթերցողներից էր, և Հ. Սրվանձյանն ու Մ. Նալբանդյանը հրապարակախոսական

---

13 Վերը բերված քաղվածքի մեր ընդգծած արտահայտությունը՝ «ճշմարիտ հայրենասեր», ըստ երևույթին արժանի է հատուկ ուշադրության։ Ակադեմիկոս Ա. Կարինյանն առիթով նկատել է, թե «ճշմարիտ հայրենասեր» տերմինը առաջին անգամ ժողովրդականացրել է հայ մամուլի մեջ Տերոյենցը, ջանալով ընդգծել հայրենասիրության սերտ կապակցությունը կրոնի, եկեղեցու, օրենքի, պետության հետ։ Դա կարևոր փաստ է» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, № 3, էջ 190)։ Ձանդրադառնալով ընդգծվող արտահայտության մեկնությանը, նկատենք, որ այն հանդիպում է «Հայրենասերի» էջերում 1845 թ. ապրիլի և սեպտեմբերի համարներում, մինչդեռ Տերոյենց-Ձամուռճյանն այն սկսում է գործածել տարիներ հետո՝ 1850-ից՝ «Հայաստան» (1846—1852) թերթում։ Ըստ որում համաձայն՝ «ճշմարիտ ազգասեր» արտահայտությունը հանդիպում է «Արշալույս արարատյանի» 1843 թ. համարներում։ Հավանաբար արտահայտությունը փոխ է առնված ժամանակի ֆրանսիական մամուլից։

14 «Հայրենասերում» տպագրված մի հոդվածի արձագանքներին անդրադառնալով, նրա «վերատեսուչ» (խմբագիր) Խ. Մելիքսելումյանցը տեղեկացրել է ընթերցողներին, որ նրա հեղինակը ինքն է, ապա և ավելացրել, որ այն բանասիրականները, «որոնց տակը ստորագրություն և կետադրություն դրված չեն նե, հայտնի է, որ անոնք օրագրոյս վերատեսչիս տակը մտացը աշխատությունն է» («Հայրենասեր», 7 դեկտեմբերի 1845, № 97)։ Ուստի և վերոհիշյալ, ինչպես և մի շարք անստորագիր հոդվածների հեղինակը համարում ենք Խ. Մելիքսելումյանցին։

լայն գործունեություն ծավալելով, մամուլը դարձրին իրոք մարտական զենք։ Նրանց համար կայուն սկզբունք էր այն, որ մամուլի և հրապարակախոսության ազգասիրական ու հայրենասիրական պարտքն է բացահայտել ազգային պակասությունները և ցույց տալ դրանց վերացման միջոցները։

«Հայրենասերի» երիտասարդ խմբագիրներն ու ժուռնալիստները տվել են նաև լավագույն օրինակն այն բանի, թե ինչպես պետք է տպագիր օրգանը կիսի այն ժողովրդի ծանր ճակատագիրը, որի համար նա հրատարակվում է, կանգնի աղետի ենթարկված ու հուսալքության մատնված իր ընթերցողների կողքին։

1845 թ. հունիսի 20-ին լույս տեսավ «Հայրենասերի» 84-րդ համարը։ Հաջորդ օրը բռնկած հրդեհը լափեց ամբողջ գաղթօջախը։ Շուրջ հինգ հազար հայեր մնացին անտուն ու անտեր, մերկ ու անոթի։ Հազիվ փրկվեցին 30-ի չափ տուն, Մեսրոպյան վարժարանը և հիվանդանոցը։ Մնացած ամեն ինչ հրո ճարակ դարձավ, այդ թվում՝ «ազգիս բոլոր տները... մանավանդ Ս. Ստեփաննոս եկեղեցին», Արագածունյացի տպարանը, բոլոր իանութ-վաճառատները։ Հայությանը պատճառված վնասը կազմում էր ավելի քան 50 միլիոն դահեկան։ Թերթի հրատարակման հերթական օրը՝ հունիսի 29-ին, «Հայրենասերը» լույս տեսավ երկէջյա՝ իբրև «հավելված ցավոց ազգասեր հոգվոց»։ Աղետի նկարագրությունը, նույնիսկ ոճը բնական էր. «Անտանելի է պատահարս... անվտանգ մը չի մնաց, որ վտանգավորները մխիթարե, ամենքն ալ գրեթե առանց մխիթարության. ահա քաղաք մեր հրձիկք՝ տունք մեր ավերակք և յոտից մինչև ի գլուխ անվնաս ոք չմնաց»։ Հազորդումներ տպագրելով այն մասին, թե ինչ քայլեր են արվում համատարած աղետն ամոքելու համար, թերթը շուտով գտավ այն խոսքը, որով նման իրադրության մեջ ընթերցողին պետք է դիմեր իր դերը լավագույնս ըմբռնող ամեն մի տպագիր օրգան։ «Բայց հերիք է,— զմյուռնիահայությանն է դիմում «Հայրենասերը»,— որ մենք ամենքս ալ սրտապնդինք և տեղի չտանք երբեք թուլասրտության, որ տիրե մեր վրա և առաջինեն ավելի ազգասիրական և ուսումնասիրական եռանդով վառվինք... քաջալերության գոտին մեջքերնիս կապելով իրարու ձեռն կալելու և մխիթարիչ ըլլալովնիս՝ քիչ ժամանակի մը մեջ աստուծով կհաղթենք այս ձախող արկածիս» (№ 87)։

Թերթը փորձում էր սատար կանգնել գաղթօջախի հայությանը։ Բայց մեծ աջակցության կարոտ էին Արագածունյաց ընկերությունը, «Հայրենասեր» թերթը, որ սկսեց հրատարակվել երկշաբաթյա պարբերականությամբ. նրանց գոյության, այսպես ասած, նյութական բազան՝ տպարանը, հրո ճարակ էր դարձել։ Այդ աջակցությունը նրանք չստացան։ 1845-ից դադարեց Արագածունյացը՝ այդպես էլ չկարողանալով կատարել իր փափագը՝ գրքեր տպել[15]։

---

15 Արագածունյաց ընկերության հրատարակչական գործունեությունը սահմանափակվել է երկու՝ Աբել Արարատյանի «Համառոտություն ազգասիրական սխրագործությանց տեառն Ներսեսի... համե տեառն 1808 ցամ տեառն 1843» (Զմյուռնիա, 1843) և Հովհաննես Զամուռճյանի «Հայտարար ուղղության...» հայատառ թուրքերեն (Զմյուռնիա, 1845, հ. 1) հրատարակություններով։ Արարատյանի գիրքը նախապես թերթոններով հրատարակվել է «Հայրենասերի» էջերում (№ 17 և 18)։ Հովհ. Տերոյենց-Զամուռճյանը սկսել է «Հայրենասերում» հանդես գալ 1844-ի հունիսից (№ 33) և աշխատակցել է մինչև թերթի դադարելը՝ տպագրելով ինքնուրույն և թարգմանական բանասիրականներ, չափածո ստեղծագործություններ, հանդես էր գալիս «Յ. Պ. Զ.», «Յովհ. Պրուս. Տ. Կարապետյան-Զամուրճյան» ստորագրություններով։ Հիմնակա-

Նրա առավել մնայուն հետքը «Հայրենասեր» թերթը եղավ, որ գոյություն ունեցավ երեք տարի՝ 1843 թ. մայիսի 28-ից առ 1846 թ. մայիսի 10-ը՝ շուրջ հընդամայա ընդհատումով, լույս տեսնելով 108 համար[16]։

Հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլի պատմության մայրուղում «Հայրենասերը» սկզբնավորեց այն ուղին, որով ընթացող պարբերականներն ավելի ճիշտ էին ըմբռնում և իրագործում իրենց խնդիրները, ավելի մոտ էին ժողովրդին և աշխատում էին սատար լինել նրա գոյատևմանն ու պայքարին։ «Հայրենասերիս» դադարումով, բարեբախտաբար, այդ ուղին չընդհատվեց։ Մ. Թաղիադյանը Կալկաթայում, 1845 թ. օգոստոսի կեսից սկսեց հրատարակել «Աղգասերը», իսկ 1851 թ. սեպտեմբերի կեսից՝ «Ազգասեր արարատյանը», որոնք հաջորդաբար տևեցին մինչև 1852 թ. հուլիսը՝ առաջադիմական-դեմոկրատական հայ մամուլի էստաֆետը փոխանցելով հաջորդներին («Բանասեր», Մադրաս, 1848—1849, «Հայրենասեր», Նիկոմիդիա, 1850—1853, «Արծվի Վասպուրական», Կ. Պոլիս, 1855—1863, «Արևելք», Փարիզ, 1855—1856, «Մեղու», Կ. Պոլիս, 1856—1871, «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1858—1864 և այլն)։ Մաքառումներ, հալածանք, պայքար՝ այդպիսին էր այդ ուղին, որի առաջին փորձությունները վիճակվեցին «Հայրենասերին»։

ИЗМИРСКАЯ ГАЗЕТА «АЙРЕНАСЕР» (1843—1846 гг.)

Кандидат историч. наук М. Н. АКОПЯН

(Резюме)

В первый период своего существования армянская печать ограничивалась преимущественно публикованием разнообразной информации. Лишь в 40-е годы прошлого века появляется тенденция к занятию активной позиции, стремление своим вмешательством воздействовать на ход событий, решать конкретные вопросы. К этому времени и относится зарождение активной армянской публицистики. Газета «Айренасер» («Патриот»), издававшаяся в Измире в 1843—1846 гг., по своему характеру и активной позиции была первым печатным органом, на страницах которого молодые журналисты Х. Меликселумянц, Х. Экизян, Н. Зораян, М. Агатонян и др. старались развернуть критику недостатков социально-культурной жизни измирской армянской колонии, проявляя демократические тенденции. Газета подверглась гонениям со стороны богачей (амира́), а затем была запрещена на пять месяцев. Однако «Айренасер» сохранил критический дух и внес весомый вклад в армянскую публицистику.

նում նա հրատարակում էր հետաքրքրությամբ ընթերցվելիք նյութեր (օդապարիկի, արդարադատության, բարեբարության, օգտակարության, նկարչության, տարբեր ցեղերի սովորույթների շուրջը և այլն)։

16 «Հայրենասերի» խմբագիր Խ. Մելիքսելումյանցը թերթի հրատարակությունը ստանձնել էր երկու տարի ժամկետով։ Սակայն 1846 թ. կեսերին նա Կ. Պոլսում զբաղվում էր թերթի հրատարակության գործերով, ինչպես դա պարզվում է «Արշալույս արարատյանում» (14 հունիսի 1846, № 261) հրատարակած նրա նամակից։ Նրա ջանքերը հաջողությամբ չեն պսակվել։ Հետագայում «Հայրենասերի» խմբագիրը կամ վերականգնել է թերթի տպարանը, կամ էլ նորը հիմնել և փորձել է զբաղվել գրատպությամբ, սակայն առաջին հրատարակություններից հետո, որոնց վրա դրոշմված է տպարանատիրոջ՝ Խ. Մելիքսելումյանցի ազգանունը, դադարեցրել է։